МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

№ 06/436-23 «28» Դեկտեմբեր 2023թ.

«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-Ի տնօրեն
Արտաշես Մկրտչյանին
(ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք,
Գայի փող., 11 շենք, բն. 20)
էլ. փոստ՝ COWPERWOODCO@yandex.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/269-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 21.11.2022 թվականին կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/269-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:»:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել՝ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օր»:

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10

Սակայն «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված ժամկետում, այն է՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում, ինչպես նաև դրանից հետո՝ մինչև 27.03.2023թ.-ը ներառյալ Գնորդին չի մատակարարվել նույն պայմանագրի 3-րդ և 16-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը որոշեց՝ միակողմանի մասնակի հրաժարվել 21.11.2022 թվականին կնքված ապրանքի մատակարարման թիվ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/269-1» ծածկագրով պետական գնման պայմանագրից 3-րդ և 16-րդ չափաբաժինների մասով՝ համարելով այն լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մինչև 06.04.2023թ.-ը ներառյալ Հավելված 3.2-ով /որակավորման ապահովում/ և Հավելված 4.1-ով /պայմանագրի ապահովում/ տրված տուժանքի մասին համաձայնագրերին կից ներկայացված վճարման պահանջագրերի 13-րդ կետում նշված շահառուի հաշվի համարին փոխանցել նույն պահանջագրերի 14-րդ կետում նշված որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները չկատարված 3-րդ և 16-րդ չափաբաժինների մասով, իսկ վճարման կտրոնների բնօրինակները ներկայացնել ԵՊՀ գնումների կազմակերպման վարչությանը: Վերը նշված պահանջը կատարելու պարագայում մասնակիցը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ **Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10